ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTICS SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA
**ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревард 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ ԴՄԴ/183
"19" 01 2018թ.

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Սուքիասյանին
ք. Երևան, Երզնկյան 4շ, բն 13
էլ. հասցեն՝ mtradeline@gmail.com
ՀՎՀՀ՝ 00130656

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-1/6-12 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայաններ (Ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահաղորդակցման միջոցներ (Տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչներ (Ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաներ (Ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով), 20 հատ ալեհավաքներ և արտացոլիչներ (Ալեհավաք DIAMOND):

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 17-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1 217 021 (մեկ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար քսանմեկ) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը):

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ